01/10.1/16530-16 2016-10-31
AJV-43-102016-10-27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-1078-30.09.2016-ՏՀ-010/0*) վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ ազատ տնտեսական գոտու շահագործող համարվող անհատ ձեռնարկատերերի՝ ազատ տնտեսական գոտու գործողության ընթացքում դրա շահագործումից ստացված եկամուտները եկամտային հարկով հարկման առումով համարվում են նվազեցվող եկամուտներ և չեն հարկվում եկամտային հարկով:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով վերանայվել են ձեռնարկատիրական եկամուտների շահութահարկով հարկման մոտեցումները: Մասնավորապես, սահմանվել է, որ շահութահարկով հարկվում են

ոչ միայն կազմակերպությունների կողմից ստացվող ձեռնարկատիրական եկամուտները, այլ նաև անհատ ձեռնարկատերերի կողմից ստացվող եկամուտները: Միաժամանակ, նշված փոփոխությունների արդյունքում միասնականացվել են նաև ազատ տնտեսական գոտիների շահագործումից ստացված եկամուտների հարկման մոտեցումները և սահմանվել, որ շահութահարկի վճարումից ազատվում են ազատ տնտեսական գոտու շահագործող համարվող շահութահարկ վճարողները (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամտի մասով:

Ելնելով շարադրվածից՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նախագծով առաջարկվող փոփոխությունը, ըստ էության, կիրառվելու է միայն 2017 թվականի համար, Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Դավիթ Անանյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **նախագ**ծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում և ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Եզրակացություն
«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծի՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով նախատեսվում է սահմանել ազատ տնտեսական գոտու շահագործող համարվող հարկ վճարողների համար ազատ տնտեսական գոտու գործողության ընթացքում դրա շահագործումից ստացված եկամուտների չափով նվազեցման հնարավորություն:

Նախագծի ընդունման և կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***դրական ազդեցություն,*** քանի որ կստեղծվեն հարկման հավասար պայմաններ ազատ տնտեսական գոտու շահագործող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի միջև:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունմամբ (այսուհետ՝ Նախագիծ) նվազեցվող եկամուտ կհամարվի՝ ազատ տնտեսական գոտու շահագործող համարվող հարկ վճարողի՝ ազատ տնտեսական գոտու գործողության ընթացքում դրա շահագործումից ստացված եկամուտները:

Նախագծով կարգավորվող շրջանակներն առնչվում են մի շարք ապրանքների և ծառայությունների շուկաների հետ: Նախագծի ընդունումը կնպաստի ազատ տնտեսական գոտիների զարգացմանը, արտահանման խթանմանը, ինչպես նաեւ նշված գոտիներում տնտեսվարող սուբյեկտների քանակի ավելացմանը:

Հիմք ընդունելով նախնական և ազդեցության գնահատման բուն գործընթացի փուլերի արդյունքները՝ արձանագրվում է Նախագծի ընդունմամբ մրցակցային միջավայրի վրա *դրական ազդեցություն հայտնաբերելու* եզրակացություն:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ ազատ տնտեսական գոտու շահագործող համարվող անհատ ձեռնարկատերերի՝ ազատ տնտեսական գոտու շահագործումից ստացված եկամուտները եկամտային հարկով հարկման առումով համարվում են նվազեցվող եկամուտներ և չեն հարկվում եկամտային հարկով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը 2017 թվականի պետական բյուջեի եկամուտների վրա կլինի բացասական, իսկ ծախսերի, ինչպես նաև համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա՝ չեզոք:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1078-30.09.2016-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-246-Ն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ «37»-րդ կետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«37) ազատ տնտեսական գոտու շահագործող համարվող հարկ վճարողի՝ ազատ տնտեսական գոտու գործողության ընթացքում դրա շահագործումից ստացված եկամուտների չափով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Առկա իրավիճակը, ընթացիկ խնդիրները եւ նախագծի ընդունման անհրաժեշտությունը: 2011 թվականին ընդունված «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո մի շարք օրենքներում կատարվեցին փոփոխություններ, լրացումներ, որոնք նախատեսում էին հարկային եւ մաքսային արտոնություններ: Մասնավորապես, «Շահութահարկի մասին» եւ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքներում տեղ գտան դրույթներ, որոնց համաձայն՝ ազատ տնտեսական գոտու շահագործող համարվող, ազատ տնտեսական գոտու տարածքում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի՝ դրա շահագործումից ստացված եկամուտն էր նվազեցվում համախառն եկամտից կամ շահութահարկի գումարը՝ 100%-ի չափով:

2013 թվականից ուժը կորցրած ճանաչվեց «Եկամտահարկի մասին» օրենքը, եւ սկսեց գործել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը, որտեղ եկամտային հարկի գծով արտոնություններ նախատեսված չէին ազատ տնտեսական գոտու տարածքում գործունեություն իրականացնող հարկ վճարողների (անհատ ձեռնարկատերերի) համար:

Գործող օրենսդրության պայմանները հարկման տեսանկյունից անհավասար են այն անհատ ձեռնարկատերերի համար, ովքեր ցանկանում են ստանալ շահագործողի թույլտվություն եւ գործունեություն իրականացնել ազատ տնտեսական գոտիների տարածքներում:

Ակնկալվող արդյունքը: Օրենքի նախագծի ընդունմամբ կվերացվեն հարկման անհավասար պայմանները ազատ տնտեսական գոտու շահագործող անհատ ձեռնարկատերերի համար, ինչը հնարավորություն կստեղծի զարգացնելու ազատ տնտեսական գոտիները, որոնք ուղղված են արտահանման խթանմանը եւ նպաստում են տնտեսական զարգացմանը: